Թուրքերենի ծրագրի մասին

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ուսուցիչ Արտակ Զարգարյանի ներկայացրած ծրագիրը շատ արդյունավետ ու հաջող ծրագիր է, պետք է որ լավ արդյունք տա: Բանավոր խոսքի զարգացման համար կարելի է նաև խաղեր ներառել: Համենայն դեպս իմ պրակտիկան ցույց է տվել, որ օգուտ է տալիս: Իսկ ընդհանուր առմամբ շատ հետաքրքիր ու հագեցած ծրագիր է:

Անահին Քարտաշյան, Պետերբուրգի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի թյուրքական բանասիրության ամբիոնի ասպիրանտ, թուրքագետ-արևելագետ

E-mail: A.kartashyan@gmail.com

Շատ հետաքրքիր ու խնամքով կազմված ծրագիր է: Որպես թուրքերեն լեզվի դասավանդող մասնագիտ, իմ կարծիքով ծրագիրը լիովին համապատասխանում է հանրակրթական դպրոցում թուրքերենը, որպես ընտրովի առարկա դասավանդելու պահանջներին: Խաղերի հետ կապված, կարելի է կազմակերպել հետևյալը. ասս հոգանոց խումբը բաժանել զույգերի, որոշել որևէ թեմա, թողնել, որպեսզի զույգերը իրար մեջ պայմանավորվեն, թե ինչ երկխոսություն են պատրաստելու, ապա առաջարկել, որ յուրաքանչյուր զույգ ներկայացնի իր սքեչը: Դա զարգացնում է ազատ հաղորդակցությունը:

Մելինե Անումյան, թուրքագետ-օսմանագետ, պատմական գիտությունների թեկնածու, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող: Աշխատում են նաև Հայաստանի Հանրային ռադիոյում, որպես թուրքերեն հաղորդումների խմբագիր և «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում» որպես գիտաշխատող և կենտրոնի թուրքերեն բաժնի պատասխանատու:

E-mail.: anu_mel@mail.ru